

## ԴԱԿԻԹ ԳԱՐՍԵՎԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ

**Խմբավար, Հայաստանի Երաժշտական Ընկերության նախագահ, Երևանի Կոմիտասի անվ. պեդագոգական կոնսերվատորիայի պրոֆեսոր, «Հայրենիքին մատուցած ծառայության համար» 2-րդ աստիճանի շքանշանակիր**

**Կ**ոմիտասի գերագույն երազանքն էր ազգային կոնսերվատորիա հիմնադրել, ուր հնարավոր կլիներ երաժշտական մասնագիտական կադրեր կրթել և դասարիարակել: Այս նպատակով Կոմիտաս վարդապետը դիմել է գործնական քայլերի և 1910-ին Կ. Պոլսում իր «Գուսան» երգչախմբի բազմաթիվ համերգներից և

## Ե Պ Կ պ ա տ մ ո թ յ ա ն է ջ եր ի ց

ման գործում: Վերջապես, ստուդիան՝ դա հայ երաժշտության ուղղության դպրոցն է, ուր նաև պետք է դաստիարակվի ուսանողությունը՝ սնվելով համամարդկային հոգու և մտքի արժեքներով»:

Երաժշտական սրտոդիային մեծ ուշադրությամբ էին վերաբերվում լուսժողովարի ղեկավարները, արվեստի բաժնի ղեկավար, տաղանդավոր պոետ Եղիշե Չարենցը: Իսկ մեծանուն նկարիչ Մարտիրոս Մարյանը երաժշտական սրտոդիայի բացումը «օրհրդնում է»՝ գրապատկերակին իր ձեռքով նուրային հնգագիծ նկարելով:

Երկու տարի անց՝ 1923 թ. հոկտեմբերի 1-ին, երաժշտական սրտոդիան վերակազմավորվում է կոնսերվատորիայի: Բուռն գործում էին դաշնամուրի, ջութակի, թավջութակի, վոկալ, փողային, երաժշտապետական առարկաների, երգչախմբի և մանկավարժական դասարաններ:

Հայաստանի կառավարության հրավերով 1924 թ. հոկտեմբերին Երևան է ժամանում Ալեքսանդր Սպենդիարյանը:

### ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԸ

դասախոսություններից գոյացած ամբողջ հասույթը փրամադրելու էր այդ նպատակին: 11 տարի անց իրականացավ հայկական կոնսերվատորիա ունենալու կոմիտասյան գաղափարը, բայց բոլորովին այլ կերպ և բոլորովին այլ պայմաններում:

1920 թ. Հայաստանում Խորհրդային իշխանություն հաստատվելուց անմիջապես հետո, չնայած երկրում փրորոջ ծայրահեղ ծանր վիճակի, 1921 թ. դեկտեմբերի 22-ին Երևանում բացվել է երաժշտական սրտոդիա, անմիջապես 10 ամիս անց Երևանի ժողովրդական համալսարանից հետո:

Հայաստանի ժողովմի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի հրավերով Թիֆլիսից Երևան է ժամանել է Ռոմանոս Մելիքյանը և նշանակվել սրտոդիայի, սպա կոնսերվատորիայի՝ 1921-1924 թթ., առաջին տնօրեն: Նրա հետ Երևան է ժամանել է կինը՝ իր գործի աջակիցը, երգչուհի, դաշնակահարուհի, կոնցերտմայստր Արուս Բաբայանը:

Ռոմանոս Մելիքյանը լծվել է բուռն սրտեղծագործական և կազմակերպական գործունեության: Ահա թե ինչ է հետապնդում և ինչ շնակերպում է տալիս երաժշտական սրտոդիային՝ ինքը Ռոմանոս Մելիքյանը:

«Ստուդիան՝ դա հայ երաժշտության լաբորատորիա է, ուր պետք է ազնվամա մեր արվեստը, ուր պետք է որոնվի և հայտնաբերվի հայ նոր երաժշտության ինքնուրույն ոճը-ոգին, հիմք ունենալով ժողովրդի ստեղծագործ արժեքները»:

Այնուհետև շարունակում է.

«Ստուդիան՝ դա այն արհեստանոցն է, ուր պետք է կռել ու կոփել հայ երաժշտի ստեղծագործական կորովը իր շրջապատի մասսաների դաստիարակ-

Ա. Սպենդիարյանի և փիլիսոփա, գեղագետ, երաժիշտ Արշակ Ադամյանի ջանքերով հիմնադրվել է ոչ մեծ սիմֆոնիկ նվագախումբ՝ կոնսերվատորիայի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ: Միմֆոնիկ նվագախմբի առաջին ելույթը մեծ արջազանքի է արժանացել ոչ միայն մասնագետների, այլև երաժշտությունը գնահատող հանրության կողմից:

Կոնսերվատորիայի՝ արդեն այդ ժամանակվա ռեկտոր Արշակ Ադամյանը (1924-1926 թթ.), Հայաստանի Լուսժողովու Արքանագ Մոսկվային հասցեագրված նամակում, որը թվագրված է 1925 թ. հունվար, գրում է, - «Երևանի կոնսերվատորիան թևակոխելով իր գոյության չորրորդ տարին, կարոտ էր նվագախմբի ստեղծմանը»:

Նախ պատմական կարևոր մի փաստ. այն որ նամակում շեշտադրվում է կոնսերվատորիայի գոյության 4-րդ տարին: Այս հանգամանքը հաստատում է այն իրողությունը, որ կոնսերվատորիայի հիմնադրումը դա 1921 թվականն է, անկասի այն հանգամանքից, որ այն ժամանակ կոնսերվատորիան համարվել է երաժշտական սրտոդիա: Այս փաստի մի այլ հաստատումն էլ այն է, որ Ռ. Հ. Մելիքյանի կողմից կոնսերվատորիայի նախագծի մշակումն էր, որը հաստատում է հետևյալ շնակերպումը, որ «Ժողովրդական կոնսերվատորիան Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություն է և ունի համալսարանի իրավունքներ»:

Երաժշտական սրտոդիայի հիմնադրման օրվանից ուսումնական աշխատանքները իրականացնում էին հիանալի երաժիշտ-մանկավարժներ, դաշնամուրային բաժնում՝ Աննա Մնացականյան, Հով-

## Ե Պ Կ պատմության էջերից

սեփ Մադաթյան, Եվգենյա Խանկալամյան, Եվգենյա Խոսրովյան, Օլգա Բաբայան, ջութակի դասարանում՝ Լևոն Միրզա-Ավագյան, Ալեք Գաբրիելյան, Դավիթ Սողոմոնյան: Ալբրիխ Անդրեյ Կոպլյարեվսկի, քավջութակի դասարանում՝ Արտեմի Ավագյան, Միքայել Մալունցյան, դասական վոկալի դասարանում՝ Արուս Բաբայան, Աստղիկ (Աստրա) Աբրամյան, Միքայել Մելիքսեթյան, Նադեժդա Կարդյան, Մազդալիա Գեևջյան, երաժշտական-լեզուական առարկաների բաժնում՝ Ռոմանոս Մելիքյան, Միքայել Միրզոյան, Օսաննա Տեր-Գրիգորյան, Անուշավան Տեր-Ղևոնդյան:

1924-1925 ուսումնական տարում կոնսերվատորիան համալրվում է նոր անուններով՝ Սպիրիդոն Մելիքյան (կոմպոզիտոր և խմբավար), Վիլիելմ Ծպեռլինգ (փողային գործիքներ), Հովհաննես Օզանեզով (ջութակ, լարային քառյակի ղեկավար, նվագախմբի ղիրիժոր):

Կոնսերվատորիայի դասախոսները բացի ուսումնական գործընթացից բուռն համերգային գործունեություն են ծավալել: Դրա փաստացի վկայությունները, բազմաթիվ հայրագրերն ու համերգային ծրագրերն են որ պահպանվել են: Ահա թե ինչ գնահատական է տալիս Ռ. Մելիքյանի գործունեությանն անվանի ջութակահար, Կոմիտասի անվան լարային քառյակի հիմնադիրներից՝ Ալեք Գաբրիելյանը. «Во главе учереждения стоял композитор, педагог, музыкально-общественный деятель, фантастически преданный своему делу — студии (консерватории) Романос Меликян. Меликян был глубоко убежден в грандиозной перспективе своего дела, и его непоколебимая уверенность властно передавалась окружающим и, в первую очередь, коллективу»:

1927 թ. կոմպոզիտոր, խմբավար Սպիրիդոն Մելիքյանը ղեկավարում է կոնսերվատորիայում իր սրեղծած երգչախումբը: Հեղինակում երգչախմբի հիմքի վրա 1937 թ. կազմավորվում է հայ երաժշտական իրականության մեջ առաջին պրոֆեսիոնալ երգչախումբը՝ Հայաստանի պետական երգչախումբը, որի գեղարվեստական ղեկավար և զխավոր խմբավար է նշանակվել Լենինգրադի կոնսերվատորիան ղիրիժորության և հորոյի դասարաններն ավարտած շնորհաշար խմբավար Թաթուլ Ալթունյանը:

1930-ին կոնսերվատորիայում հիմնադրվել է սրեղծագործական դասարանը, առաջին դասարաններն էին՝ Հարո Սրեփանյանը, Սարգիս Բարխուդարյանը և Վարդգես Տալյանը: Իսկ 1937 թ. կոնսերվատորիայում բացվել է երաժշտագիտական բաժինը, հիմնադիրներ՝ Չավեն Վարդանյան, Կոնստանտին Մելիք-Արթանեսյան, Սամսոն Գասպարյան (1937-1940 թթ. ռեկտոր):

Բուրի առաջնահերթ խնդիրներից էր ուսումնական գործընթացի կազմակերպումը, ուսման արդյունավետության բարձրացումը, մանկավարժական, մեթոդական և կադրաբանական աշխատանքների համակարգումը:

Կարևորվում էր նաև ուսումնական գործընթացում

բարձր որակավորում ունեցող պրոֆեսորներով համալրումը: Այս գործում մեծ ներդրում ունեցավ 1935 թ. Մոսկվայից Երևան տեղափոխված մեծանուն ղիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ Արթուր Նիկիշի աշակերտ՝ Կոնստանտին Սարաջեր (ռեկտոր՝ 1936-37 թթ. և 1940-54 թթ.): Նրա գործունեության արդյունքում Հայրենական Մեծ պատերազմի տարիներին կոնսերվատորիայի մանկավարժական կազմը համալրվում է Մոսկվայի և Լենինգրադի կոնսերվատորիաների հայ շնորհալի շրջանավարտներով՝ Ռոբերտ Անդրիասյան, Հրաչյա Բոգդանյան, Կարպ Դոմբաև, Գեորգի Սարաջև, ինչպես նաև Մոսկվայից Երևան տեղափոխված այլազգի տաղանդավոր երաժիշտներ՝ Կոնստանտին Բզումնով, Քսենիա Էրդելի: Տաղանդավոր դաշնակահար Կ.Բզումնովը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին դասավանդել է Երևանի կոնսերվատորիայում, տալով հիանալի դաշնակահարներ՝ Աննա Ամբակունյան, Էլզա Ապրեստյա, Ելենա Տեր-Ղևոնդյան, Մարջան Միխայրյան, Արևիկ Ավդալբեկյան, այլ նաև հանդես էր գալիս մենահամերգներով և սիմֆոնիկ նվագախմբի հետ, որը ղեկավարում էր Կոնստանտին Սարաջեր:

Հայաստանի Միևիտորների Խորհրդի՝ 1946 թ. ղեկավարների որոշմամբ Երևանի Պետական կոնսերվատորիան անվանակոչվեց հայ ազգային դասական երաժշտական դպրոցի հիմնադիր Կոմիտասի անունով և այն դարձավ երաժշտական բարձրորակ կադրերի դարբնոց:

Բուրի 50-ամյա հորելյանի առթիվ ԽՍՀՄ կառավարության որոշմամբ Կոմիտասի անվան կոնսերվատորիան արժանացել է բարձր պարգևի՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի:

Կոնսերվատորիայի մասնագիտական հասունացմանը մեծապես նպաստում էր մշտական սրեղծագործա-ուսումնական կապը Մոսկվայի և Լենինգրադի կոնսերվատորիաների հետ. անգնահատելի էր ակադեմիկոս երաժիշտներ՝ Արամ Խաչատրյանի, Դմիտրի Շոստակովիչի մանկավարժական սրեղծագործական օգնությունը հայ երաժիշտներին: Որակյալ մասնագետներ կրթելու գործում անուրանալի էր ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ, կոմպոզիտորներ Գրիգոր Եղիազարյանի (ռեկտոր՝ 1954-1960 թթ.) և Ղազարոս Սարյանի երկարամյա ռեկտոր (1960-1986 թթ.) դերը: Շուրջ 26 տարի Ղ. Սարյանը ղեկավարեց կոնսերվատորիան՝ բարձր կուլտուրայի տեր քաղաքացի, չափազանց պահանջուր և կիրթ մարդ, մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի որդին, ով անցել էր Հայրենական Մեծ պատերազմի բոլով և հաղթանակած վերադարձել:

Մեր ժողովրդին վիճակված էր բաղձալի և ցանկալի առաքելություն. դա մեր երկրի անկախացումն էր: Այս դժվարագույն տարիներին Կոմիտասի անվան կոնսերվատորիան ղեկավարեցին տաղանդավոր կոմպոզիտորներ, մեծանուն երաժիշտներ, հասարակական գործիչներ՝ Էդգար Հովհաննիսյանը (ռեկտոր՝ 1986-1992 թթ.), Տիգրան Մանսուրյանը (ռեկտոր՝ 1992-1995 թթ.), Արմեն Սմբարյանը (ռեկ-

տրո՝ 1995-2002 թթ.):

1997 թ. Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական խորհրդի որոշմամբ և անձամբ ռեկտոր Արմեն Սմբարյանի անմիջական ջանքերով հիմնադրվեց Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղը, որն իր գործունեությամբ մեծապես նպաստում է քաղաքի և տարածաշրջանի երաժշտական կյանքի ընդհանուր վերելքի խթանմանը: Ինչպես նաև հիմնադրվեց առաջին անգամ միջազգային գիտական «Երաժշտական Հայաստան» (1998 թ.) ամսագիրը, հիմնադիրներ՝ ռեկտոր Արմեն Սմբարյան, գլխավոր խմբագիր, երաժշտագետ Գոհար Շազոյան:

Կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի րևոբեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Կարինե Ավդալյանի ջանքերով հիմնադրվեց երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» փառապոռնը, որը մեկնարկել է 2007 թվականին: Առաջին փառապոռնը, որն իր մասշտաբներով հանրապետական էր, կազմակերպիչների գերազանց աշխատանքի շնորհիվ, շուրջ 400 պատանի և երիտասարդ երաժիշտներ էին ժամանել Գյումրի՝ մեր հանրապետության գրեթե բոլոր մարզերից: Արդեն 2015-ին «Վերածնունդ» միջազգային 7-րդ մրցույթ-փառապոռնը, որը նվիրված էր Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին և Հայրենական Մեծ պատերազմում խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 70-ամյակին, ապացուցեց, որ մրցույթ-փառապոռնը Հայաստանում դարձել է արվեստի խոշորագույն միջազգային փոնահանդես: Միայն մասնակիցների քանակը (մոտավորապես 3000 հոգի) և մասնակից երկրների աշխարհագրությունը (36 երկիր), տարբեր երկրների մեծանուն երաժիշտների աշխատանքը հանձնախմբերում, նրանց տված համերգներն ու վարպետության դասերն, ապացուցեցին մրցույթ-փառապոռնի բարձր վարկանիշն ու հեղինակությունը: Այս տարի մեկնարկում է Երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» միջազգային՝ թվով 8-րդ մրցույթը, որը տարեց-տարի մեծ թափ է առնում և հայտնաբերում երաժշտական տարբեր անվանակարգերում նորանոր դասիներին:

Մրցույթը մեծ հեղինակություն է վայելում ոչ միայն մեր հանրապետությունում, ԱՊՀ երկրներում, այլև արտասահմանում: Մշակութային քաղաք Գյումրի ժամանած մրցույթի մասնակիցները, հանձնախմբերում աշխատող անվանի երաժիշտները ծանոթանում են մեր երկրի պատմական հուշարձաններին, ինչպես նաև մշակութային կյանքին:

Դաշնակազմի Սերգեյ Սարաջյանի (ռեկտոր՝ 2002-2010 թթ.) ղեկավարությամբ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան շարունակեց գրել իր պատմական տարեգրության էջերը:

Սրեղծվում է կոնսերվատորիայի հրատարակչությունը (2004 թ.) «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրության հիմքով, հրատարակչության հարկի ներքո, որի հիմնադիրն է նաև երաժիշտագետ Գոհար Շազոյանը, սրեղծել են ամսաթերթը, ուսումնամեթոդական հոդվածների ժողովածուներն ու բուհական, առայժմ՝ 5 դասագրքերը,

հանրապետական ինչպես նաև բուհական պաշտոնական «Երաժիշտ» ամսաթերթը (2005 թ.):

Նույն 2005-ին կազմակերպվել է ուսանողական Երիտասարդական նվագախումբ, տաղանդավոր ջութակահար Սերգեյ Սմբարյանի ղեկավարությամբ: Նվագախումբը ոչ միայն սրացել է պետական կարգավիճակ, այլև իր սրեղծագործական փասնամյա կենսագրության ընթացքում արդեն հասցրել է համաշխարհային համբավ ձեռք բերել:

2008 թ. ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, երաժշտահասարակական գործիչ Արմեն Բուդաղյանի ջանքերով, բուհի արգասավոր ուղու յուրահատուկ ամփոփումը դարձավ «Ереванская государственная консерватория имени Комитаса», մշակույթի անվանի գործիչների ասոցիացիայի, փաստաթղթերի և լուսանկարների գիրք-ալբոմը (2.):

Այս գրքի նախաբանում պրոֆեսոր Ա. Գ. Բուդաղյանը գրում է. «Уже через год после создания студии, Армения имела постоянно действующие учебный хор и струнный квартет педагогов, спустя 4 года – студенческий симфонический оркестор при участии педагогов, через 6 лет – оперный класс, через 11 – оперный театр (Все - на базе консерватории). Свою ведущую роль в комплектовании исполнительских коллективов Армении консерватория сохраняет и сегодня так же, как и свой высокий удельный вес в концертной жизни республики в целом».

Ջութակահար Շահեն Շահինյանի (2010-ից մինչև օրս ռեկտոր) ղեկավարության ընթացքում, բուհում հսկայածավալ բարեփոխումներ են իրականացվում: Ռեկտորի հեղինակական աշխատանքի և ջանքերի շնորհիվ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան անցավ եվրոպական փորձագետների մոտիթորինգը և հանրապետության առաջին չորս բուհերի շարքում սրացավ ինստիտուցիոնալ հավասարմագրում, ինչպես նաև բուհը անդամագրվեց և դարձավ Եվրոպական կոնսերվատորիաների ասոցիացիայի լիիրավ անդամ: Այս տարիներին բուհն ավելացրել է հանրապետական մրցույթների, փառապոռնների անցկացումը, ինչպես նաև միջազգային հեղինակավոր մրցույթներում հաղթանակներ գրանցելը: Դրա վառ ապացույցներից մեկն էլ այս տարի կոնսերվատորիայի ակադեմիական երգեցողության մագիստր Մանե Գալոյանի հաղթանակն էր, աշխարհում շատ հեղինակավոր երաժիշտ-կատարողների Պ. Ի. Չալկովսկու անվան միջազգային մրցույթում (պատվավոր երրորդ մրցանակ):

Բուհի շրջանավարտները, ասպիրանտները գիտության ասպարեզում ասպհովում են հայ երաժիշտագիտական մրքի առաջընթացը: Կոմպոզիտորական գործունեության սրեղծագործական ասպարեզում նրանք զարգացնում են հայ պրոֆեսիոնալ երաժշտությունը, հայկական կոմպոզիտորական դպրոցը շարունակում է հայ երաժշտությունը ներկայացնել համայն աշխարհին: Իսկ կրթական



ասպարեզում կոնսերվատորիայի շրջանավարտները մանկավարժական գործունեություն են ծավալում երաժշտական դպրոցներում, քոլեջներում, ինչպես նաև կոնսերվատորիայում: Նաև կարարողական ասպարեզում համալրում են հանրապետության քոլոր երաժշտական խմբերը՝ սիմֆոնիկ, փոդային, ժողովրդական գործիքների, էստրադային-ջազային նվագախմբերը, երգչախմբերը, կամերային անսամբլները: Հանդես են գալիս որպես մենակարարներ, Հայաստանում և նրա սահմաններից դուրս՝ ներկայացնում հայ կոմպոզիտորների սրեղ-ծագործություններն ու բարձր մակարդակի հասած հայկական կարարողական արվեստը, շարունակում աշխարհում հայրենի մեր ազգային կարարողական դպրոցի լավագույն ավանդույթները՝ հանդես գալիս հյուրախաղերով և հաջողությամբ մասնակցում են միջազգային ամենապարբեր հեղինակավոր մրցույթների և փառատոների:

1950-ական թվականներից կոնսերվատորիայում բարձրագույն երաժշտական կրթություն են ստանում ինչպես սիյուռքահայ, այնպես էլ արտերկրների երիտասարդ երաժիշտներ:

**Քանախ-քանիք.** ԵՊԿ, պատմություն, ստույգ, ռեկտոր, Ռոմանոս Մելիքյան, Արշակ Աղամյան, Սամսոն Գասպարյան, Կոնստանտին Սարաջև, Ղազարոս Սարյան, Էդգար Հովհաննիսյան, Արմեն Սմբատյան, Սերգեյ Սարաջյան, Շահեն Շահինյան, Գավիթ Ղազարյան:

**Ключевые слова:** ЕГК, история, студия, ректор, Романос Меликян, Аршак Адамян, Самсон Гаспарян, Константин Сараджев, Газарос Сарьян, Эдгар Оганесян, Армен Смбалян, Сергей Сараджян, Шаген Шагинян, Давид Казарян.

**Keywords:** yants). YSC, history, studio, rector, Romanos Melikyan, Arshak Adamyan, Samson Gasparyan, Konstantin Saradzhev, Ghazaros Saroyan, Edgar Hovhannisyanyan, Armen Smbatyan, Sergey Sarajyan, Shahen Shahinyan, David Ghazaryan.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՂԱԶԱՐՅԱՆ ԳԱՎԻԹ ԳԱՐՍԵՎԱՆԻ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ԵՊԿ պրոֆ., ավարտել է. 1970-ին՝ ԵՊԿ սիմֆոնիկ ժողովրդական և խմբավարության բաժինը (պրոֆ. Ռ. Մանգասարյան, գերագանց) և նույն տարում դասավանդել մասնագիտական դասարանում (խմբավարություն): 1995-2014 թթ. ԵՊԿ Վոկալ-տեսական ֆակուլտետի ղեկավար է եղել, այժմ ռեկտորի խորհրդակցում: 1996-ից առ այսօր ՀԵԸ նախագահ: Խմբերգային ազգային երաժշտական արվեստում գործունեության ներդրումների համար խմբավար, հասարակական գործիչը պարգևատրվել է ՀՀ մշակույթի և ՀՀ գիտության և կրթության նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի ոսկե մեդալներով, ՀՀ Անկախության օրվա առթիվ «Մուկես Խորենյան» մեդալով (2007 թ.), ՀՀ Անկախության 25-ամյակի առթիվ պարգևատրվել է «Հայրենիքի մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով (2017 թ.): Եղել է ավելի քան 40-տարի կազմակերպել է միջազգային և հանրապետական երաժշտական փառատոների և մրցույթների հանձնախմբի նախագահ, շուրջ 15 տարի ՀՀ Պետական մրցանակի «Երաժշտական արվեստ» անվանակարգի շնորհման հանձնախմբի անդամ, իսկ 2011-ից՝ նախագահը: Նա հեղինակ է բազմաթիվ գիտական և մեթոդական աշխատանքների, ինչպես նաև խմբերգային երկերի ժողովածուների կազմող և խմբագիր: Իր մասնագիտական խմբավարության դասարան ավարտել է ավելի քան 60 խմբավար և 12 ասպիրանտ-ստաժոր, որոնք աշխատում են և ՀՀ-ում, և նրա սահմաններից դուրս և որոնցից շատերը Խորհրդային միության, հանրապետական և միջազգային տարբեր մրցույթների և փառատոների դափնեկիրներ են:

**Сведения об авторе:** КАЗАРЯН ДАВИД ГАРСЕВАНОВИЧ - хормейстер, дирижер, музыкально-общественный деятель. В 1970 году К. с отличием окончил ЕГК (класс проф. Р. Мангасаряна) и в том же году начал преподавательскую деятельность на кафедре хорового дирижирования. С 1995 по 2014 год в должности декана руководил Вокально-теоретическим факультетом ЕГК. В настоящее время является Советником ректора ЕГК. С 1996 года по сей день является Председателем МОА. За внесенный вклад в национальное музыкальное искусство и за творческую деятельность Д. Казарян награжден золотыми медалями Минкультуры РА, Министерства Образования и науки РА, мэрии г. Еревана. В 2007 году по инициативе Независимости РА от имени Президента РА был награжден медалью "Мовсес Хоренаци". К. свыше 40 лет был организатором, председателем жюри республиканских и международных музыкальных фестивалей и конкурсов, около 15 лет был членом комиссии по присуждению Госпремии РА в номинации "Музыкальное искусство", а с 2011 года является председателем вышеназванной комиссии. Он является автором многочисленных научных и методических трудов, а также составителем и редактором музыкальных сборников хороших произведений. Заслуженный деятель культуры РА, профессор ЕГК. Специальный класс К. окончили свыше 60 хормейстеров, 12 аспирантов-стажеров. Выпускники спец. класса К. работают с разными коллективами как в РА, так и за ее пределами, многие из них являются призерами, лауреатами различных международных, всесоюзных и республиканских конкурсов и фестивалей.

**Information about the author:** GHAZARYAN DAVID GARSEVAN, chorus master, musical public figure. In 1970 with honors graduated from the YSC (a class of Prof. R. Mangasaryan) and in the same year begun teaching activity at the department of choral conducting. From 1995 to 2014 as a dean directed Vocal and theoretical faculty of YSC. Now he is the adviser of YSC rector. Since 1996 till today he is the chairman of AMC. For the contribution to a national musical art and for creative activity Gh. has been awarded by gold medals of the Ministry of Culture of RA, the Ministry of Education and Science of RA, city administration of Yerevan. In 2007 in Independence Day of Armenia on behalf of the President of RA he has been awarded by the medal "Movses Khorenatsi". Ghazaryan was over 40 years had been the organizer, the chairman of jury of republican and international musical festivals and competitions, about 15 years had been a member of the commission on award of the State award of Armenia in the nomination "Musical Art", and since 2011 he is the chairman of the above-named commission. Gh. is the author of numerous scientific and methodical works, and also the originator and the editor of musical collections of choral works. Special class of "Choral conducting" of Gh. was ended by over 60 chorus masters, 12 graduate student-trainees. Graduates of a special class of Gh. work with different collectives both in RA, and beyond its limits. Many graduates of a class of Gh. are prize-winners, laureates of various all-Union, republican and international competitions and festivals.

## Րեզյումե

Профессор ЕГК, председатель АМО Давид Гарсеванович Казарян. - "Страницы истории Ереванской государственной консерватории им. Комитаса".

Автор показывает в историческом разрезе вклад ректоров ЕГК в становление и развитие первого и единственного в Армении вуза-консерватории. Фактический материал обосновывает значение деятельности руководства консерватории для профессионального развития и обогащения армянского музыкального искусства.

## Summary

Professor of YSC, chairman of AMC David Garsevan Ghazaryan. - "History pages of YSC".

The author shows a contribution of YSC's rectors in historical section, in a formation and development of the first and the only higher education institution in Armenia conservatory. The actual material proves the value of activity of conservatory's authority for professional development and enrichment of the Armenian musical art.